ORIGIN

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Անկողմնակալության սույն քաղաքականությունը հանդիսանում է «Սերտիֆիկացում և Որակ» ՍՊ Ընկերության (այսուհետ՝ Ընկերության), ներքին նորմատիվ փաստաթուղթ, որը ներկայացնում է առանցքային սկզբունքներ և պահանջներ՝ ուղղված անկողմնակալության ապահովմանը:

1.2. Սույն քաղաքականությունը մշակված է «Սերտիֆիկացում և Որակ» ընկերության ներքին կանոնադրության համաձայն, որի պահանջները տարածվում են Ընկերության, նրա աշխատակիցների և/կամ ներկայացուցիչների և ընկերության անունից կամ հանձնարարականներով գործող այլ անձանց համար այն դեպքերում, երբ նրանց հետ կնքված համապատասխան պարտականությունները ամրագրված են (օրինակ՝ աուդիտորներ):

1.3. Ընկերությունն այս քաղաքականությամբ երաշխավորում է, որ կապահովի իր պատվիրատուների կամ հավանական պատվիրատուների հետ հարաբերություններում ներգրավված բոլոր աշխատակիցների անաչառությունը:

1.4. Հետևելով սույն քաղականության նպատակներին Ընկերությունը հավաստում է բոլոր շահագրգիռ կողմերին, որ իր կողմից տրամադրված համապատասխանության սերտիֆիկատները ամբողջական են և հուսալի:

2. Հիմնական հասկացություններ

2.1. **Անկողմնակալություն** - օբյեկտիվության առկայություն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Օբյեկտիվությունը նշանակում է, որ շահերի բախումներ գոյություն չունեն կամ դրանք լուծվում են այնպես, որպեսզի սերտիֆիկացման մարմնի գործունեության վրա դա բացասական ազդեցություն չունենա:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Անկողմնակալություն տարրի արտահայտման համար գործածվում են նաև այլ տերմիններ, ինչպիսիք են օբյեկտիվությունը, անկախությունը, շահերի բախումներից զերծ մնալը, անկողմնակալությունը, նախապատվության բացակայությունը, չեզոքությունը, արդարությունը, թափանցիկությունը, ազնվությունը, անաչառությունը, հավասարակշռությունը:

2.2. **Կառավարման համակարգի վերաբերյալ խորհրդատվություն**- մասնակցություն կառավարման համակարգի մշակման, ներդրման կամ պահպանման գործընթացներին՝

ա) ձեռնարկների կամ ընթացակարգերի մշակում կամ թողարկում,

բ) կառավարման համակարգի մշակման և ներդրման վերաբերյալ հատուկ խորհուրդներ, ցուցումներ կամ լուծումների առաջարկում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Դասընթացներ կազմակերպելը կամ որպես դասընթաց վարող հանդես գալը չի համարվում խորհրդատվություն, սակայն այն դեպքում, երբ դասընթացը վերաբերում է կառավարման համակարգերին կամ աուդիտին, դա սահմանափակվում է ընդհանուր տեղեկատվության տրամադրմամբ, որը հանրամատչելի է, այսինքն՝ դասընթաց վարողը չպետք է տրամադրի տվյալ ընկերության համար հատուկ լուծումներ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Ընդհանուր տեղեկատվության տրամադրումը՝ սակայն ոչ գործընթացների կամ համակարգերի բարելավմանն ուղղված հատուկ լուծումների առաջարկումը, չի համարվում խորհրդատվություն:

2.3. **Պատվիրատու** - կազմակերպություն, որի կառավարման համակարգը աուդիտի է

Գործողություն	Անուն Ազգանուն	Պաշտոն	Ստորագրություն	Ամսաթիվ
Կազմեց				
Վերանայեց				
Հաստատեց				
Լիազորեց				

2.4. ենթարկվում սերտիֆիկացման նպատակներով:

2.5. **Կոռուպցիա** - ի պաշտոնե տրված լիազորությունների չարաշահում՝ անձնական օգուտ ստանալու նպատակով:

2.6. **Համապատասխանություն** - վերաբերվում է կազմակերպությունների ընթացակարգերին, համակարգերին կամ ստորաբաժանումներին, որոնք ապահովում են այդ կառույցների իրավական, գործառնական և ֆինանսական գործունեության համապատասխանությունը գործող օրենքներին, նորմերին, կանոնակարգերին, կանոններին, չափանիշներին և հանրային ակնկալիքներին:

1. Նպատակ և խնդիրներ

1.1. Մեր առջև դրված առանցքային նպատակն ու խնդիրները հետևյալն են՝

1.1.1. Ապահովել Ընկերության կողմից օրինականության և անկողմնակալության սկզբունքների պահպանումը:

1.1.2. Բարձր պահել Ընկերության հեղինակությունը պետության, հաճախորդների, գործընկերների, մրցակիցների և ընդհանրապես հասարակության շրջանում:

1.1.3. Նվազեցնել Ընկերության կոռուպցիոն ներգրավվածության ռիսկը:

1.1.4. Գործել միջազգային ստանդարտների պահանջների համապատասխան՝ չհակասելով դրանց կողմից ներկայացված անկողմնակալության սկզբունքներին:

1.1.5. Անկողմնակալության պահպանման և դրսևորման համար գնահատել բոլոր հարաբերություններում հնարավոր ռիսկերը, որոնք կարող են ի հայտ բերել շահերի բախում կամ կարող են հանդիսանալ անկողմնակալության սպառնալիք:

1.2. Հիմնական նպատակին հասնելու համար «Սերտիֆիկացում և Որակ» ՍՊԸ ղեկավարությունը պարտավորվում է՝

1.2.1. Գնահատել անկողմնակալության ռիսկերը,

1.2.2. Չիրականացնել միևնույն ընկերությունում կառավարման համակարգերի ներդրում/խորհրդատվություն և սերտիֆիկացում, որը հակասում է միջազգային ISO 17021-1-2015 ստանդարտի անկողմնակալության սկզբունքին:

1.2.3. Ընկերության բոլոր օղակներում ձևավորել հստակ մթնոլորտ ընկերության կողմից որդեգրված քաղաքականության վերաբերյալ,

1.2.4. Ապահովել համապատասխան ֆինանսական և հաշվապահական, այդ թվում՝ ներքին վերահսկման ընթացակարգերի առկայություն,

1.2.5. Իրականացնել համապատասխանության ընթացակարգերի պարբերական ստուգում և փորձարկում,

1.2.6. Ապահովել անկողմնակալության քաղաքականության հասանելիությունը և դրա դրույթների պարտադիր իմացությունը Ընկերության ողջ անձնակազմի համար:

Հաստատված է՝

Տնօրեն _____ Հ. Թադևոսյան